

Լ Է

Ս. ԶԱԳԱՐԻԱՅԻ ՎԱՆՔԸ ՆԱԶԱՐԷՅԻ ՄՕՏ

(«յարսեւան լերինն.» Ղուկ. Գ. 29).

1.— Հին կտակարանը և Յովսեփոս Նազարէթի վրայ տեղեկութիւն մը չեն տար. միայն Նոր կտակարանի Աւետարանները հարեւանցի տեղեկութիւններով կը ծանօթացնեն Գալիլիոյ սոյն քաղաքը: Նազարէթ նշանաւոր հանդիսացաւ աւետումովը հրեշտակին առ Ս. Կոյսն՝ որուն հաղորդեց Քրիստոսի Մարդեղութեան և Փրկագործութեան մեծ խորհուրդները. անտարակոյս այս աւետարանական դէպքը աննշմար չպիտի մնար հին քրիստոնէից մօտ: Ուղղակի Նազարէթէն մեկնեցաւ Ս. Կոյսը իր խօսեցեալին հետ գալու Բեթղեհէմ, Գաւթի քաղաքը, ուր ծնաւ Յիսուս՝ մեր Տէրը: Տիրոջ քառասնօրեայ տաճարի ընծայումէն և Եգիպտոսի պանդխտութենէն յետոյ Յիսուս Նազարէթ կը մեկնի իր ծնողաց հետ. հոն էր որ աճեցաւ և զօրացաւ լի իմաստութեամբ «և շնորհք Աստուծոյ էին ի վերայ նորա»: Անոր ծընողքը ամէն տարի Զատիկի օրը Երուսաղէմ կ'երթային: Յիսուս տասներկու տարեկան էր երբ անոնք, ըստ սովորութեան սօնին, Երուսաղէմ գացին և ուխտերնին կատարելով դարձան: Յիսուս հոն կը մնար, բայց չէին գիտեր իր ծնողքը և կը կարծէին թէ ուղեկիցներուն հետ կը գտնուէր. մէկ օրուան ճամբացեկան ու տեսան որ Յիսուս ուղեկիցներուն հետ չէր գտնուէր ետ դարձան Երուսաղէմ ուր գտան պատանի Յիսուսը տաճարին մէջ: Ան վարդապետներուն հետ կը խօսէր որոնք կը զարմանային Անոր իմաստութեան և տուած պատասխաններուն վերայ: Յիսուս՝ ծնողքին հետ միանալով զնաց Նազարէթ «և էր նոցա հնազանդ»: Ան հոն կը զարգանար իմաստութեամբ և հասակաւ «և շնորհօք յԱստուծոյ և ի մարդկանէ»: Մեր Փրկիչը կը